ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԴԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Քնարիկ Առաքելյան

Անձի զոհայնությունն ու զոհայնացումը տարբեր ոլորտների՝ քրեաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն և այլ գիտակարգերի հետաքրքրության և ուսումնասիրման առարկան են: Վերջիններիս հանդեպ հետաքրքրությունն առավել մեծացել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ տեղի էր ունենում մարդկանց զանգվածային զոհայնացում: Հենց այդ ժամանակահատվածում էլ ծնվեց մի նոր գիտական ճյուղ, որը կոչվում է զոհաբանություն:

Զոհաբանությունը գիտություն է զոհի մասին (լատիներեն victima-զոհ և հունարեն logos-ուսմունք, գիտություն): Որպես այդպիսին գիտնականները զոհաբանությանը մոտենում են երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով զոհաբանություն ասելով հասկանում ենք գիտություն, որն ընդգրկում է գիտության սոցիալ-հոգեբանական այն ոլորտը, որն ուսումնասիրում է ոչ բարենպաստ սոցիալացում ապրած կամ ոչ բարենպաստ սոցիալական պայմաններում գտնվող զոհերին: Այսպիսով, զոհաբանությունը համակարգային գիտություն է մարդկանց մասին, որոնք գտնվում են ճգնաժամային իրավիճակում՝ հանցագործությունների զոհեր, բնական աղետների, վթարների, տարբեր բռնությունների և այլ տիպի զոհեր, ինչպես նաև ոլորտ է, որն առաջարկում է որոշակի միջոցներ նման երևույթները կանխարգելելու համար: Իսկ նեղ իմաստով զոհաբանությունը քրեաբանության ճյուղ է, որն ուսումնասիրում է զոհի սոցիալական, հոգեբանական, բարոյական և մի շարք այլ բնութագրիչներ՝ հանցավոր վարքում զոհի ունեցած դերը, որը նախորդել կամ ընթացել է նման վարքի հետ, այն հարաբերությունները, որոնք առկա են զոհի և հանցագործի միջև [1, 2, 10, 13]:

Տարբեր ժամանակաշրջաններում տարբեր գիտնականներ յուրովի են մոտեցել անձի զոհայնություն և զոհայնացում հասկացություններին և տվել են ինքնատիպ սահմանումներ: Անձի զոհայնության ուսումնասիրություններին առավելապես անդրադարձել են խորհրդային քրեաբաններն ու իրավաբանական հոգեբանները, իսկ զոհայնացումը՝ որպես գործընթաց և արդյունք, առավել ուսումնասիրվել է արևմտյան հեղինակների կողմից:

Այս աշխատանքում մենք կքննարկենք այն տեսությունները, որոնք դիտարկում են անձի զոհայնությունը՝ որպես խոցելիություն, անձի ներքին նախադրյալ որոշակի ռիսկային իրավիճակներում զոհ դառնալու: Ընդ

որում, նման խոցելիությունը, մասնավորապես, պայմանավորված է անձի անհատական–հոգեբանական և վարքային առանձնահատկություններով, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և կառուցվածքային գործոններով: Ստորև ներկայացվող տեսություններում զոհայնությունը դիտարկվում է որպես ներքին նախադրյալ, որը, սոցիալական գործոնների ազդեցությամբ, հանգեցնում է զոհայնացման:

Անձի զոհայնությունը ներկայացնում է մի շարք օբյեկտիվ պարագաներում անձի զոհ դառնալու բարձր հավանականությունը՝ կախված սոցիալական դիրքից կամ մի շարք հոգևոր ու ֆիզիկական առանձնահատկություններից: Անհատը ձեռք չի բերում զոհայնություն, հակառակը, ուղղակի չի կարող զոհային չլինել, քանի որ հասարակության մասն է, իսկ վերջինս զերծ չէ հանցագործություններից և այլ տեսակի զոհածին իրավիճակներից: Գերմանացի գիտնական Գ. Շնայդերը նշում է, որ գոյություն չունեն բնածին զոհեր կամ բնությունից օժտված զոհեր, բայց մարդու կողմից ձեռք բերված ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական գծերն ու հատկանիշները կարող են նրան դարձնել հանցագործության զոհ [5, 13]:

Զոհայնությունը բարդ հասկացողություն է, գրականությունում գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ, որոնք միտված են բացատրելու զոհայնության ֆենոմենը, ինչպես նաև տալու երևույթի դասակարգումը:

Լ. Ֆրանկը դիտարկում է զոհային վարքը զոհայնացման կատեգորիայի տեսանկյունից և ընդգծում այն միտքը, որ զոհայնությունը հանդես է գալիս երկու հիմնական ձևերով՝ պոտենցիալ զոհայնության և իրականացված զոհայնության: Ըստ Լ. Ֆրանկի սահմանման՝ զոհայնությունն անձի իրական կամ պոտենցիալ ընդունակությունն է սոցիալ–վտանգավոր իրավիճակներում անհատապես կամ խմբակային զոհ դառնալու: Համաձայն Ֆրանկի մոտեցման, զոհայնությունը պայմանավորված է անձի անհատական, վարքային որակների համադրությամբ, որոնք էլ, իրենց հերթին, որոշակի պայմաններում, փոխգործակցում են արտաքին գործոնների հետ և հանգեցնում այն բանին, որ անձը դառնում է զոհ [10, 11]:

Վ. Պոլուբինսկին գտնում է, որ անձի զոհայնության մասին խոսելիս պետք չէ ուշադրությունը կենտրոնացնել միայն որոշակի զոհածին պայմաններում անձի զոհ դառնալու ընդունակության հավանականության վրա, հարկավոր է հաշվի առնել նաև վերջինիս անհատական և վարքային առանձնահատկությունները, այն սոցիալական կապերը, որոնք նա ունի հանցանք կատարող անձի հետ [6]: Հեղինակն առանձնացնում է անձի զոհայնության դրսևորման չորս հիմնական տեսակ՝ անհատական, տեսակային, խմբային, մասսայական: *Անհատական զոհայնությունը* պայմանավորված է անձի սոցիալական, հոգեբանական

կամ կենսաբանաֆիզիկական առանձնահատկություններով կամ դրանց համադրությամբ, որոնք նպաստում են որոշակի հանցածին պայմաններում անձի զոհայնացմանը: Այսինքն՝ հեղինակն անձի զոհայնությունը կապում է բացարձակապես անհատի ներքին որակների հետ, իսկ արտաքին որակներին տալիս է միայն պոտենցիալ զոհայնացման իրականացման դեր: Անահատական զոհայնության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ դեպքերում այն ընտրողական է հանդես գալիս, քանի որ մարդիկ, ովքեր ունեն տարբեր որակներ ու առանձնահատկություններ, որպես կանոն, դառնում են տարբեր հանցածին և զոհածին երևույթների զոհ, իսկ մարդիկ, որոնց բնորոշ են նման անհատական, սոցիալական, ժողովրդագրական և այլ տեսակի բնութագրիչներ, հակառակը, հաճախ դառնում են նմանատիպ հանցանքների զոհ: Ընդ որում, և՛ Լ. Ֆրանկը, և՛ Վ. Պոլուբինսկին գտնում են, որ հանցանքի զոհ կարող է դառնալ և այնպիսի անհատը, որին բնորոշ չէ ոչ մի տեսակի պոտենցիալ զոհայնություն:

Զոհայնության երկրորդ տեսակը, որն առանձնացնում է հեղինակը, *տեսակային զոհայնությունն* է, երբ որոշակի անձինք, ելնելով իրենց առանձնահատկություններից և որոշակի հանգամանքներից, դառնում են զոհ:

Երրորդ տեսակը *խմբային զոհայնությունն* է, որը բնորոշ է որոշակի խմբերի ներկայացուցիչներին, որոնք ունեն բարդ սոցիալական, ժողովրդագրական, հոգեբանական, կենսաֆիզիկական առանձնահատկություններ: Օրինակ, կան մասնագիտություններ, որոնք օբյեկտիվորեն բարձրացնում են անձի զոհայնացման հավանականությունը: Նման մասնագիտություններից են ոստիկանի մասնագիտությունը, հսկիչի կամ անվտանգության աշխատակցի աշխատանքը, գանձապահի աշխատանքը և այլն: Նմանատիպ աշխատանքներ կատարող անձինք, ելնելով իրենց մասնագիտական գործունեության բնույթից, այլ անձանց համեմատ, ավելի հաճախ են հայտնվում զոհային իրադրություններում:

Եվ վերջապես՝ *մասսայական զոհայնությունը*, որի արդյունքում մարդիկ, ելնելով իրենց անձնային, սուբյեկտիվ որակներից, հակված են կրելու ֆիզիկական, բարոյական, նյութական վնաս: Այն ներառում է վերը թվարկված զոհայնության երեք հիմնական տեսակները:

Հակադիր կարծիքին է հարում հայտնի ռուսաստանցի քրեաբան Դ. Ռիվմանը [8]: Համաձայն նրա տեսության՝ գոյություն ունի «նորմալ», «միջին» և «պոտենցիալ» զոհայնություն, որը բնորոշ է հասարակության բոլոր անդամներին: Ցանկացած անհատ պոտենցիալ զոհային է, քանի որ, գտնվելով կյանքի որոշակի պայմաններում, կարող է դառնալ տարբեր սոցիալական ոչ բարենպաստ երևույթների, այդ թվում՝ հանցանքի զոհ: Ռիվմանի հիմնական պնդումն այն էր, որ անհատը զոհայնությունը ձեռք չի

բերում, այլ ուղղակի չի կարող չլինել զոհային: Միևնույն ժամանակ, հեղինակը նշում է, որ նման որակի հավանական ինքնիրացումը (ռեալիզացիան) մեծապես պայմանավորված է որոշակի պայմանի առկայությամբ: Այսպիսով, անձի որակները, որոնք կազմում են զոհային պոտենցիալը, հարաբերական են և իրականանում են միայն որպես «մարդ-միջավայր» համակարգի տարրտ՝ անձի ադապտացիոն ռեակցիայի համատեքստում:

Զոհայնություն հասկացությունն այլ կերպ էր ընկալում Վ. Կոնովալովը [4]: Նա դիտարկում էր զոհայնությունը որպես բարդ և ոչ միատարր սոցիալ–հոգեբանական երևույթ: Նա առանձնացնում էր զոհայնության երկու հիմնական տեսակ: Զոհայնության առաջին տեսակը կոչվում է *անձնային–հոգեբանական* կամ *անձնային զոհայնություն*, որը դրսևորվում է որոշակի անձի որոշակի անձնային որակներով, այդ թվում նաև որոշ անձանց սուբյեկտիվ ընդունակություններով, ելնելով իրենց բնորոշ հոգեբանական առանձնահատկություններից՝ դառնալ որոշակի հանցավոր դրսևորումների զոհ այն ժամանակ, երբ առկա էր իրական հնարավորություն խուսափելու զոհայնացումից: Քանի դեռ չեն ստեղծվել անհրաժեշտ պայմաններ անձնային զոհայնության դրսևորման համար, այն մնում է որպես անձնային պոտենցիալ: Ընդ որում՝ անձնային զոհայնությունը կազմող անհատական առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են տարբեր իրավիճակներում անձի զոհայնացումը, իրենց բովանդակությամբ անգամ նույն անհատի պարագայում տարբեր են: Զոհայնության երկրորդ տեսակը հեղինակն անվանում է *դերային զոհայնություն*: Զոհայնության այս տեսակը կապված է այն դերերի և այն գործառույթների հետ, որոնք անձն իրականացնում է սոցիումում: Ընդ որում, համաձայն Կոնովալովի՝ նմամ զոհայնությունը տեղ ունի միայն այն ժամանակ, երբ զոհային վարքի հիմքում ընկած են լինում այն դերն ու գործունեությունը, որոնք իրականացնում է անձը: Քանի դեռ սահմանված չէ նման կապ, դերային զոհայնությունը համարվում է հնարավոր զոհայնություն:

Զոհայնության նման հասկացման կողմնակիցներից էր Վ. Ռիբալսկայան [9]: Հեղինակը զոհայնությունը դիտարկում է որպես անձի հատուկ հատկանիշ, որը վերջին հաշվով պայմանավորում է անձի՝ այս կամ այն զոհային իրադրություններում զոհ դառնալու մեծ հավանականությունը: Հեղինակն առաջարկում է տարբերել զոհայնության հետևյալ տեսակները՝ զոհայնություն, որը հանդիսանում է անձի սոցիալ–հոգեբանական առանձնահատկությունների համադրություն, որն էլ, իր հերթին, կապված է անձի սոցիալականացման առանձնահատկությունների հետ; մասնագիտական կամ դերային զոհայնություն, որը կապված է անձի դերերի և մասնագիտական գործունեությունների հետ; տարիքային զոհայնություն, որը հանդիսանում է անձի

կենսաֆիզիկական հատկանիշ; զոհայնություն-պաթոլոգիա, որն անձի պաթոլոգիկ վիճակի հետևանք է: Չնայած հեղինակն առանձնացնում է զոհայնության այս տեսակները, նա նաև ընդգծում է այն միտքը, որ բոլոր այդ տեսակներն իրական կյանքում հաճախ հանդես են գալիս միասին կամ համընկնում են:

Հայտնի ռուս իրավաբան Վ. Վասիլևը զոհայնության ձևավորման գործընթացում առավել առաջատար դեր է տալիս անձի այնպիսի կառուցվածքային միավորներին, ինչպիսին են անձի ուղղվածությունը, կյանքի փորձն ու արժեքային կողմնորոշումները, հոգեկան գործընթացների և հոգեկան առանձնահատկությունների զարգացման յուրահատկությունները, անձի բնավորության գծերը, կենսաբանա-հոգեբանական և անհատական տիպաբանական բնութագրիչները [3]:

Զոհայնության մեկ այլ սահմանում է առաջարկել Ա. Ռեպեցկայան [7]: Համաձայն նրա սահմանման՝ զոհայնությունն անձի կայուն տիպիկ սոցիալական և/կամ հոգեբանական, երբեմն նաև ֆիզիոլոգիական առանձնահատկությունների որոշակի համակարգ է, որը, արտաքին միջավայրի գործոնների հետ համագործակցության արդյունքում նպաստում է անձի զոհ դառնալուն: Ընդ որում՝ այդ առանձնահատկությունները կարող են ենթարկվել շտկման՝ ընդհուպ մինչև վերջիններիս չեզոքացումը: Ա. Ռեպեցկայան առանձնացնում է զոհայնացման չորս հիմնական տեսակ: Առաջին տեսակը *անձի զոհածին դեֆորմացիան է*, որը հանդիսանում է անձի սոցիալ–հոգեբանական հատկանիշների համադրություն, որոնք կապված են անձի ոչ բարենպաստ սոցիալականացման հետ: Հոգեբանական տեսանկյունից այն դրսևորվում է հուզական անկայունությամբ, անվերահսկելիությամբ, աբստրակտ մտածողության ընդունակության նվազմամբ, բարձր կոնֆլիկտայնությամբ: Զոհայնության երկրորդ տեսակը *մասնագիտական, դերային զոհայնությունն է*, որը պայմանավորում է անձի զոհայնացումը վրջինիս անձնային առանձնահատկություններից անկախ՝ ելնելով այն դերից, որը նա կրում է: Երրորդը *տարիքային զոհայնությունն է*՝ որպես անձի կենսաֆիզիկական հատկանիշ: Խոսքն այն մարդկանց մասին է, որոնք ունեն բարձր զոհայնացման հավանականություն, օրինակ, հաշմանդամներ, որոշակի տարիքային խմբեր, մասնավորապես՝ դեռահասներ և այլն: Վերջին տեսակը, որն առանձնացվել է հեղինակի կողմից, *զոհայնություն–պաթոլոգիան է*: Համաձայն այս տեսակի սահմանման, զոհայնությունն անձի պաթոլոգիկ վիճակի՝ հոգեկան հիվանդության, լսողության և տեսողության զգայարանների թերարժեքության, այլ ծանր սոմատիկ խանգարումների հետևանք է:

Անձի զոհայնությունը հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել զոհաբանության ուսումնասիրության առարկա հադիսացող մեկ այլ երևույթ՝ զոհայնացումը: Զոհայնացումն անձի՝ զոհի վերածվելու գործընթացն է:

Սահմանումից բխում է, որ զոհայնացումը, մի կողմից, գործընթաց է զոհ դառնալու, մյուս կողմից՝ այն հանդես է գալիս որպես արդյունք:

Արևմտյան և խորհրդային քրեաբանական, հոգեբանական գրականությունում առկա են զոհայնացման ֆենոմենի բացատրման բազմաթիվ տեսություններ: Սակայն վերջին ժամանակներս լայն տարածում են ստացել այսպես կոչվող «կենսակերպի տեսությունն» ու «ամենօրյա գործունեության տեսությունը»: *Կենսակերպի տեսության* կողմնակիցները պնդում են, որ անհատի զոհայնացումը պայմանավորված է վերջինիս կենսակերպով: Այլ կերպ ասած, տարատեսակ առօրյայի և կենսակերպի փոփոխությունները, որոնք տեղի են ունենում անհատի կյանքում, նպաստում են, որ անհատն ավելի մեծ հավանականություն ունենա հայտնվելու զոհածին իրավիճակներում, զոհածին գործոնների ազդեցության տակ: Կիրառելով հոմոգենության սկզբունքը՝ Հինդելանգը պնդում է, որ մարդիկ առավել հակված են դառնալու զոհ, երբ հարաբերությունների մեջ են մտնում այնպիսի անձանց ու խմբավորումների հետ, որոնց բնորոշ են բռնությունն ու հանցավոր վարքը: Օրինակ, ըստ հեղինակի, երիտասարդ մարդիկ առավել հակված են զոհայնցման, քան մեծահասակները, քանի որ երիտասարդներն ավելի մեծ հավանականություն ունեն շփման մեջ մտելու այլ երիտասարդների հետ, որոնք տարբեր մակարդակներով ներգրավված են հանցավոր գործունեության կամ բռնության դրսևորումների մեջ [15]:

Հաջորդ տեսությունը, որը փորձ է կատարում բացատրել զոհայնացման ֆենոմենը, *ամենօրյա գործունեության տեսությունն է*: Տեսության կողմնակիցները պնդում են, որ զոհայնացումը և հանցագործ վարքը հասկանալու համար հարկավոր է վերլուծել անձի ամենօրյա գործունեությունը: Ամենօրյա գործունեություններն ընթացիկ, պարբերական գործունեություններ են, որոնք ապահովում են բնակչության և անհատների հիմնական կարիքները: Նման գործունեությունները կարող են տեղի ունենալ տանը, աշխատավայրում կամ այլ վայրերում և հանգամանքներում: Հենց նման ամենօրյա գործունեությունը կարող է ծնել զոհային իրավիճակ, որն էլ, իր հերթին, կհանգեցնի անձի զոհայնացման [12]:

Ժամանակակից մոտեցումներից մեկը՝ *զոհայնացման հավանականության մոդելը* միավորում է վերը թվարկած երկու մոտեցումները և փորձում բացատրել, թե ինչպես անձի եկամուտը, սեռը, տարիքը և մի շարք այլ գործոններ կարող են նպաստել վերջինիս զոհայնացմանը: Այս տեսությունը շեշտադրում է անհատների սոցիալական անհավասարությունը զոհայնացման հավանականության մեջ, մասնավորապես հանցավոր զոհայնացման պայմաններում [15]:

Զոհայնացումը կարող է լինել նաև անձի վարքային դրսևորումների արդյունք: Նման մոտեցումն ուսումնասիրվել է *զոհայնացման վարքային տեսության* շրջանակներում: Ելնելով այս տեսության հիմնադրույթներից՝ կախված այն բանից, թե ինչ դեր կամ նշանակություն է ունենում անհատի վարքը զոհայնացման գործընթացում, զոհայնացման գործոնները կարող են լինել ակտիվ և պասիվ: Ակտիվ գործոնների շարքում առանձնացնում են անձի կողմից տարաբնույթ հրահրումները՝ ինչպես վարքային, այնպես էլ խոսքային, որոնք հենց պայմանավորում են զոհայնացման վարքային բաղադրիչը: Պասիվ զոհայնացման գործոնների շարքում առանձնացնում են, օրինակ, կրոնը, սեռական կողմնորոշումը, սեռը կամ էթնիկական պատկանելությունը [14]:

Ելնելով վարքային տեսությունից՝ գրականությունում հանդիպում են զոհերի դասակարգման տարբեր մոտեցումներ, որոնք բացահայտում են անձի դերը զոհայնացման գործընթացում: Համաձայն առավել հաճախ հանդիպող դասակարգման հանդիպում ենք հետևյալ տեսակներին. լիովին անմեղ կամ «իդեալական» զոհ՝ նման անձինք, վարքային տեսանկյունից, ոչինչ չեն անում, ինչը կարող է նպաստել վերջիններիս զոհայնացմանը; զոհ, որի մեղքի բաժինն ավելի քիչ է, քան հանցագործինը՝ նման անձինք կարող են բնորոշվել հակահասարակական վարք ցուցաբերու միտումով; զոհ, որը նույնքան մեղավոր է, որքան հացագործը; և վերջապես, զոհ, որն առավել մեղավոր է, քան հանցագործը՝ կարող է լինել զոհ–հրահրիչ, որը հանդիսանում է խթան զոհածին իրադրության ստեղծման համար [5, 10, 13]:

Վերը թվարկված բոլոր տեսությունները, ինչպես նաև մի շարք այլ տեսություններ, միտված են բացատրելու զոհայնացման էությունը, բայց չկա մեկ միասնական տեսություն, որը կարողանար մինչև վերջ բացատրել այդ երևույթը:

Այսպիսով, կարելի է գալ այն եզրահանգման, որ ժամանակակից հոգեբանական գիտությունում գոյություն չունի մեկ ընդհանուր հայեցակարգ, որը կբացատրեր անձի զոհայնության և զոհայնացման առաջացման պատճառներն ու մեխանիզմները: Բայց, այնուամենայնիվ, հարկավոր է նշել, որ հետազոտողների մեծ մասը հանգում է այն բանին, որ այդ սոցիալ-հոգեբանական ֆենոմենների հիմքում ընկած է հոգեբանական, ֆիզիոլոգիական, կենսաբանական, սոցիալական, տնտեսական, կառուցվածքային, համակարգային և հասարակական գործոնների համադրությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զոհի ուսումնասիրությունները սկսվել են հանցագործ–զոհ համատեքստում և հիմնական շեշտը դրվել է հանցագործ անձի ուսումնասիրության վրա, իսկ զոհը դիտարվկել է որպես հանցանքի իրականացման գործընթացում այս կամ այն չափով մեղավորութուն ունեցող սուբյեկտ, կարևորվում են այն բոլոր միջառարկայական

ուսումնասիրությունները, որոնք ուղղված են անձի զոհայնության ուսումնասիրություններին: Հոգեբանական տեսանկյունից այս տեսությունների վերլուծությունը կարևորվում է նրանով, որ եթե քրեաբանները, իրավաբանները և իրավական դաշտի այլ ներկայացուցիչներ դիտարկում են գերազանցապես հանցագործ–անձ համակարգը՝ որպես սոցիալական երևույթ, նպատակ ունենալով նվազեցնել հանցագործությունների իրականացումը, հոգեբանների համար առաջնային է անձի զոհայնացման՝ որպես անձնային խոցելիության ուսումնասիրումը, այն գործոնների և պայմանների ուսումնասիրությունը, որոնք նպաստում են զոհայնացման ձևավորմանն ու դրսևորմանը, ինչպես նաև բացահայտել զարգացման վաղ շրջանում անձի զոհայնացման կանխարգելման հնարավոր ուղիները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Առաքելյան, Ք., Հայրապետյան, Դ.** Զոհաբանությունը որպես գիտության զարգացման արդիական ուղղություն, *Գիտությունը և կրթությունը Արցախում*, N 3 - 4, 2008, էջ 85–90:
2. **Аракелян, К., Шаболтас, А.** Виктимология как отрасль юридической психологии: экскурс в историю возникновения, *Сборник тезисов участников межвузовской научно - практической интернет - конференции по юридической психологии,* М., МГППУ, 2011, ст. 4–8:
3. **Васильев, В.** *Юридическая психология,* СПб., 2009.
4. **Коновалов, В.** *Виктимность и ее профилактика. Виктимологические проблемы борьбы с преступностью*, Иркутстк, Изд–во Иркутского университета, 1982.
5. **Малкина-Пых, И.** *Психология поведения жертвы.* Изд-во Эксмо, Москва, 2006.
6. **Полубинский, В.** *Виктимологические аспекты в профилактике преступлений,* Москва, 1980.
7. **Репецкая, А.** *Виновное поведение и принцип справедливости в уголовной политике,* Иркутск, 1994, с. 66–71.
8. **Ривман, Д.** О содержании понятия “виктимность”. *Вопросы теории и практики борьбы с преступностью.* Л., ВПУ МВД СССР, 1974, с. 18–28.
9. **Рыбальская, В.** О виктимологическом направлении профилактики несовершеннолетних. Виктимология и профилактика правонарушений, *Виктимология и профилактика правонарушений: Сборник научных трудов*, под ред. П. С. Дагель и др., Иркутск, Иркутский государственный университет им. А. А. Жданова, 1979, с. 66 – 71.
10. **Франк, Л.** Виктимология и виктимоность. Душанбе, 1972.
11. **Франк, Л**. *Потерпевший от преступления и проблемы советской виктимологии.* Душанбе, Ирфон, 1977.
12. **Lawrence, E., Felson, M.** Social Change and Crime Rate Trends: A Routine Activity Approach, *American Sociological Review*, Vol. 44 (August), 1979, pp. 588 – 608.
13. **Fattah, E.** Victimology: Past, Present and Future. *Criminology*, Vol. 33, N 1, 2000, pp. 17–46.
14. **Oliveira, E.** *Victimology and Criminal Law*, University Press of America, 2008.
15. **Wallace H., Roberson C**. *Victimology: Legal, Psychological, and Social Perspectives*, Boston, MA: Allyn and Bacon, 1998, pp. 317-29.